ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 28 հուլիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Բիկսա» ՍՊԸ-ն 19. 07. 2011թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7 հոդվածի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» դրույթների կիրառումը և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված

մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 18, 19 և 92 հոդվածների պահանջներին հակասող»:

Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը, միևնույն գործի շրջանակներում, սկզբում՝ տարբեր հոդվածների դրույթների, իսկ վերջին երկու անգամները՝ միևնույն հոդվածի դրույթների սահմանադրականության հարցերով ՀՀ սահմանադրական դատարան է դիմում արդեն թվով 6-րդ անգամ: Այսպես, առաջին անգամ դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 21.12.2009 թվականին՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը 2009 թվականի դեկտեմբերի 28-ին մերժել է «Բիկսա» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիությունը՝ վերոնշյալ հոդվածների դրույթների սահմանադրականությունը վիճարկելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ նշված հոդվածների վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի՝ համապատասխանաբար ՍԴՈ-690, 754, 765, 817 որոշումները: Այնուհետև երկրորդ անգամ «Բիկսա» ՍՊԸ-ն կրկին նույն գործի շրջանակներում սահմանադրական դատարան է դիմել 29. 03. 2010 թվականին՝ այս անգամ արդեն վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը: 06. 04. 2010 թվականին սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը ՍԴԴԿՈ/2-13 որոշմամբ մերժել է «Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը՝ այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը: Երրորդ անգամ «Բիկսա» ՍՊԸ-ն սահմանադրական դատարան է դիմել 05. 10. 2010 թվականին՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը: 2010 թվականի հոկտեմբերի 15-ին սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը ՍԴԴԿՈ/2-32 որոշմամբ մերժել է «Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը՝ այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը: Իսկ 21. 03. 2011թ. թվով 4-րդ անգամ դիմողը վիճարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117. 6-րդ հոդվածի սահմանադրականությունը: 2011 թվականի ապրիլի 4-ին ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը ՍԴԴԿՈ/2-5 որոշմամբ մերժել է «Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը: 21.06.2011թ. թվով 5-րդ անգամ դիմողը վիճարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ

հոդվածի սահմանադրականությունը: 2011 թվականի հուլիսի 6-ին ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը ՍԴԴԿՈ/1-16 որոշմամբ մերժել է «Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու և որպես սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չառաջադրող դիմում լինելու պատճառաբանությամբ:

Սույն դիմումով դիմողը ՀՀ սահմանադրական դատարանին խնդրում է «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7 հոդվածի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» դրույթների կիրառումը և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 18, 19 և 92 հոդվածների պահանջներին հակասող»:

Գործի դատավարական պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ 05.06.08 թվականին «Բիկսա» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության, երրորդ անձ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ «Կենտրոն» տարածքի նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի նոտարական գործողությունը վիճարկելու և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ հարկադիր կատարող Ալեքսան Բաղդասարյանի վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի վճռով հայցը մերժվել է: Այդ վճռի դեմ «Բիկսա» ՍՊԸ-ի՝ 2009 թվականի հոկտեմբերի 15-ի, 2010 թվականի հունվարի 27-ի և 2010 թվականի ապրիլի 15-ի բերված վճռաբեկ բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանի 28.10.2009 թվականի, 04.03.2010 թվականի և 28.04.2010 թվականի որոշումներով վերադարձվել են: Նույն վճռի դեմ հայցվորը 2011 թվականի փետրվարի 11-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը 2011 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ վերադարձվել է: Վերաքննիչ դատարանի նշյալ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 25.05.2011թ. որոշմամբ վերադարձվել է:

Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ վիճարկվող դրույթը ՀՀ վճռաբեկ դատարանին հնարավորություն է տալիս ձևավորել այնպիսի դատական պրակտիկա, համաձայն որի՝ բողոքները վերադարձվում են առանց քննության, առանց դիմողների բողոքներում առկա թերությունները մատնանշելու և դրանք վերականգնելու ժամկետ սահմանելու:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ գործի քննությունը

սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ա/ Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը որևէ կերպ, որևէ իրավական փաստարկի օգնությամբ չի հիմնավորել վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասությունը ՀՀ Սահմանադրությանը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի հրամայական պահանջն է: Դիմողի պատճառաբանություններն ու փաստարկները բացառապես վերաբերում են նրա կողմից՝ սուբյեկտիվ ընկալմամբ վճռաբեկ դատարանի դատական ակտի մեկնաբանմանը. այսպես՝ դիմումի՝ «Դիմողի դիրքորոշումը» վերտառությամբ 1-ին կետում նշվում է, որ «... Գործերի ընդունման հարցերում վճռաբեկ դատարանի դրսևորած մոտեցման արդյունքում անհնարին է դարձել վճռաբեկ դատարանի իրավասությունների շրջանակում «Բիկսա» ՍՊԸ-ի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքի պաշտպանությունը»: Այսինքն, ինչպես վկայում է անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը, պահպանված չէ վերը հիշատակված դրույթի հրամայական պահանջը: Վերջինիս վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Այս կապակցությամբ դիմողը բավականին անորոշ, մեկ նախադասությամբ նշում է, որ « ... սույն վարչական գործով, վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի կիրառումը դուրս է գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, քանի որ սահմանափակում է «մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը...», ինչն էլ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի հատկանիշն է»: Դատական կազմը գտնում է, որ նման ձևակերպումը չի կարող համարվել վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականության պատշաճ հիմնավորում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով:

Հարկ է նշել նաև, որ դիմողը պատշաճ կերպով չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է.

բ/ դիմումի նախնական ուսումնասիրությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են /այդ մասին ուղղակիորեն նշում է նաև դիմողը դիմումի՝ «Դիմողի պատճառաբանումներն ու փաստարկները» վերտառությամբ 2-րդ կետում/, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, այս առումով ևս առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ամփոփելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839, ինչպես նաև ՍԴԱՈ-21 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշում-ներով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական

դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

«Բիկսա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

28 հուլիսի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-18